

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ

ԱՄՍԱԹԻՎ՝ 01.09.2022թ.



Երևանի հ. 175 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի՝ ուսումնական
աշխատանքի գծով տեղակալի ուսումնադաստիարակչական
աշխատանքների տարեկան պլան

2022-2023 ուստարի

ՏՈՒԱԳՏ՝ Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**<<Երևանի հ.175 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի 2022-2023 ուստարվա
ուսումնադաստիարակչական**

**աշխատանքի գծով տնօրենի տեղակալի աշխատանքների տարեկան
պլան**

Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող/ Պատասխանա տու
2021-2022 ուստարում տարեկանից անբավարար գնահատված ու ամառային առաջադրանք ստացած սովորողների վերաքննությունների կազմակերպում ,ընդունում և փոխադրման ձևակերպում:	20.08-31.08	Տնօրեն ՏՈՒԱԳՏ ՈՒսուցիչ Մ/Մ նախագահ
Դպրոցի 2021-2022 ուստարվա ներքին գնահատման հաշվետվության կազմում:	Հուլիս-օգոստոս	ՏՈՒԱԳՏ
Ապահովել ուսուցիչների մասնակցությունը օգոստոսյան առարկայական սեմինար պարապմունքներին:	Օգոստոսի վերջ, սեպտեմբեր	ՏՈՒԱԳՏ
Մասնակցություն դպրոցի 2021-2022 ուստարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի նախապատրաստմանն ու կազմմանը:	20.08-31.08	ՏՈՒԱԳՏ
2022-2023 ուստարվա առարկայական մասնախմբերի ձևավորում, նախագահների առաջադրում:	25.08-31.08	ՏՈՒԱԳՏ Մ/Մ նախագահներ
Դպրոցի 2022-2023 ուստարվա ուսպլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի վերաբերյալ առարկայական մասնախմբերում քննարկումներ և դրանց հիման վրա այդ ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մասնախմբի նիստում առաջարկությունների առաջադրում ,2022-2023 ուստարվա ուսումնական պլանի հաստատում:	25.08-31.08	Տնօրեն ՏՈՒԱԳՏ Մ/Մ նախագահներ

Նոր ուսումնական տարվա համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում:	20.08-25.08	ՏՈՒԱԳՏ
Ապահովել ուսուցիչներին առարկայական ծրագրերով և մեթոդական գրականությամբ:	20.08-30.08	ՏՈՒԱԳՏ
Առարկայական մասնախմբերի ղեկավարների հետ անցկացնել հատուկ նիստ նոր կրթակարգին համապատասխան ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների և անցումային շրջանից պահանջվող խնդիրների վերաբերյալ :	15.08-25.08	ՏՈՒԱԳՏ
Մասնախմբերի աշխատանքների կազմակերպում , պլանավորում, վերահսկում : Մ/Մ-ան նիստերի անցկացում ամիսը մեկ անգամ՝ հերթական և ,անհրաժեշտության դեպքում , արտահերթ :	01.09-09.09	ՏՈՒԱԳՏ Մ/Մ նախագահ
Դասացուցակի կազմում , հաստատում , հրապարակում , ԿՏԱԿ-ում ներբեռնում , տարրական դասարանների դասացուցակի առանձնացում:	30.08	ՏՈՒԱԳՏ , օպերատոր
Էլեկտրոնային մատյանում դասաբաշխման իրականացում: Էլմատյանում մատենավարության վերաբերյալ հարցերի քննարկում , պարզաբանում :	30.08-31.08	ՏՈՒԱԳՏ , օպերատոր

<p>Էլեկտրոնային մատյանում << Հայոց լեզու , անգլերեն , ռուսաց լեզու , տեխնոլոգիա >> առարկաների խմբերի հստակեցում , բաժանում:</p>	<p>31.08</p>	<p>ՏՈՒԱԳՏ , դասղեկ</p>
<p>ՈՒԱԳՏ-ի 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական պլանի կազմում և ներկայացում տնօրենի հաստատմանը:</p>	<p>25.08-01.09</p>	<p>ՏՈՒԱԳՏ</p>
<p>Ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանների ստուգում , փոփոխությունների կատարում , Մ/Մ-ում քննարկում , հաստատում: Սովորողներին տրվող գործնական , թեմատիկ , ամփոփիչ գրավոր աշխատանքների քանակի և որակի քննարկում և հաստատում , բանավոր հարց ման քանակի հստակեցում կիսամյակի կտրվածքով :Վերահսկել դրանց իրագործումը ըստ քանակի և որակի :</p>	<p>01.09-09.09</p>	<p>Տնօրեն ՏՈՒԱԳՏ Մ/Մ</p>
<p>Շարունակական վերահսկողության իրականացում պլանավորված աշխատանքների կատարման , ուսուցիչների հաճախումների , դրանց հաշվարկման և էլեկտրոնային մատենավարության վերաբերյալ:</p>	<p>1-2-րդ կիսամյակներ</p>	<p>ՏՈՒԱԳՏ</p>
<p>Կարևորել ուսուցիչների վերապատրաստման դասընթացները ,շահագրգռել ուսուցիչներին մասնակցելու դրանց և էլ ավելի բարձրացնելու իրենց մասնագիտական հմտություններն ու կարողությունները:</p>	<p>1-2-րդ կիսամյակ</p>	<p>Տնօրեն ՏՈՒԱԳՏ</p>
<p>Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ ուսուցիչներին ` հատուկ ուշադրություն դարձնելով սկսնակ ուսուցիչներին , կարևորելով ուսուցիչ – աշակերտ հարաբերությունը , նոր ` ինտերակտիվ մեթոդների կիրառումը աշակերտակենտրոն դասապրոցեսին:</p>	<p>1-2-րդ կիսամյակ</p>	<p>ՏՈՒԱԳՏ</p>

<p>Սովորողների գիտելիքների որակը բարելավվելու նպատակով կատարել մշտական դասալսումներ , արդյունքները քննարկել մասնախմբերի և մանկիտրիդի նիստերում : Տեսրերի վարման վիճակի ստուգում :</p>	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ
<p>Առարկայական միամսյակների և տասնօրյակների կազմակերպում , իրականացում , արդյունքների ամփոփում: Համապատասխան մատյաններում արձանագրում : Պլանավորված միամսյակի ընթացքում տվյալ առարկայի դրվածքի ուսումնասիրում : Գրավոր աշխատանքներ տալ բոլոր դասարաններում մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով :</p>	Ամիսը 1 անգամ	ՏՈՒԱԳՏ Մ/Մ
<p>Շաբաթը մեկ անգամ ստուգել էլմատյանում կատարված գրանցումներն ու միավորային գնահատումը : Կատարել դիտողություն ըստ անհրաժեշտության , շտկել բացթողումները :</p>	Շաբաթը մեկ անգամ	ՏՈՒԱԳՏ
<p>Առարկայական օլիմպիադաների կազմակերպում , անցկացում , մյուս փուլերում սովորողների մասնակցության ապահովում :</p>	Դեկտեմբեր , հունվար , փետրվար	ՏՈՒԱԳՏ Մ/Մ
<p>120 և ավելի ժամ բացակայած սովորողների մասին տեղեկատվություն :</p>	Դեկտեմբեր	ՏՈՒԱԳՏ
<p>Փոխադարձ դասալսումների իրականացում , քննարկում , արձանագրում : Փորձի փոխանակում , նոր մեթոդների հետ ծանոթացում , կիրառում : 9-րդ և 12-րդ դասարաններում տալ քննական առարկաներից գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքներ : Քննարկել Մ/Մ-ում :</p>	1-2- րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ Ուսուցիչներ Մ/Մ նախագահ

Ուսումնական գործընթացի իրականացման ընթացքում մեծ ուշադրություն հատկացնել սովորողների 8 առանցքային կարողունակությունների զարգացմանն ուղղված գործընթացներին:	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ Մ/Մ նախագահ
Մշտական վերահսկողության կենտրոնում պահել ավարտական դասարանների առաջադիմության , կարգապահության հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպել համապատասխան աշխատանքներ :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ ՄԿԱ
Ուշադրության կենտրոնում պահել չառաջադիմող սովորողներին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ : Շարունակական վերահսկողություն իրականացնել սովորողների դասերին հաճախելիությանը , անվտանգ միջավայր ապահովել ուսումնառության համար , հետևել հիգիենայի կանոններին :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ
Պարբերաբար ստուգել ծրագրային նյութերի կատարողականը :Վերահսկել ուսուցիչների ամենօրյա աշխատանքը , սովորողների ստացած գիտելիքների համապատասխանությունը պետական չափորոշիչների պահանջներին , արդյունքնորը քննարկել մասնախմբերի և մանկխորհրդի նիստերում :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ
Պարբերաբար ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին : Մասնակցություն ՏՀՏ դասընթացների մասնագիտական կատարելագործման համար , տանել հետազոտական , մեթոդամանկավարժական աշխատանքներ , ստեղծել ուսումնական նյութեր և դրանք կիրառել դասի ընթացքում , կատարել էլեկտրոնային պաշարների համալրում :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ Մ/Մ

Դասի պլանավորում , նախապատրաստում , դիտարկում , քննարկում , վերլուծություն , առաջարկություններ , անդրադարձ , հետադարձ կապի ապահովում , հաջողված փորձի փոխանակում , բաց դաս , օրինակելի դաս , ինտեգրված դասեր , զեկույցներ , նախագծային և հետազոտական աշխատանքներ :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ Մ/Մ ուսուցիչներ
Ներառական կրթության ապահովում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար , ԱՌԻՊ-ի կազմում ըստ կարիքի , երկարաժամկետ կամ կարճաժամկետ նպատակների սահմանում , իրագործում համապատասխան մանկավարժաճանաչական աջակցության ծառայությունների տրամադրման օգնությամբ : Վերահսկողություն իրականացնել ԱՌԻՊ –ի կազմման և բոլոր կետերի կատարման վրա : Յուրաքանչյուր կիսամյակի վերջում արդյունքների մասին ներկայացնել ծնողին: Ամիսը մեկ անգամ անցկացնել արդյունքների քննարկում դասավանդող ուսուցիչների, հոգեբանի ,լոգոպեդի և հատուկ մանկավարժի հետ :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ Ուսուցիչներ Լոգոպեդ Հոգեբան
Ծրագրով նախատեսված բնագիտական առարկաներից ՏՀՏ դասերի անցկացման վերահսկում : Ժամանակակից մեթոդների և ավանդականի համատեղում:	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ
Կազմակերպել և իրականացնել մանկավարժական ընթերցումներ , խորհրդատվություններ , վերլուծություններ՝ հաշվի առնելով ուսուցիչների առաջարկությունները :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ Մ/Մ նախագահ
Կազմակերպել ուսուցչի օգնականների աշխատանքները , ընդգրկել թեմատիկ և օրվա դասի պլանների կազմման աշխատանքներին : Վերահսկել ուսուցիչների օրվա դասի պլանի առկայությունը և բնույթը :	1-2-րդ կիսամյակ	ՏՈՒԱԳՏ

Հայոց լեզու և գրականություն /միամսյակ/ Բնագիտամաթեմատիկական /միամսյակ/ Պատմահասարակագիտական /միամսյակ/ Օտար լեզու/միամսյակ/	Հոկտեմբեր Նոյեմբեր Փետրվար Մարտ	Տնօրեն ՏՈՒԱԳՏ Մ/Մ նախագահ Ուսուցիչներ
Ուսումնադաստիարակչական աշխատանքների առաջին , երկրորդ կիսամյակների և տարեկան արդյունքների ամփոփում , ծրագրային կատարողականի և հաշվետվության ներկայացում մանկադպրոցի նիստերում :	25-26 դեկտեմբեր 25-26 մայիս Հունիսի վերջ	ՏՈՒԱԳՏ
2022-2023 ուստարվա պետական ավարտական քննական հրահանգի ծանոթացում 12-րդ դասարանների սովորողներին , 2-րդ կիսամյակում ուսումնասիրվող առարկաների քանակի և ժամաքանակի հստակեցում: Դեկտեմբերին և հունիսին անցկացվող քննությունների կազմակերպում և անցկացում :	Դեկտեմբեր Հունիս	Տնօրեն ՏՈՒԱԳՏ
2022-2023 ուստարվա ավարտական քննական հրահանգի ծանոթացում 9-րդ դասարանի սովորողներին: Տարեվերջյան ավարտական քննությունների կազմակերպում ,անցկացում , կրթության հաջորդ /ավագ / երրորդ աստիճան փոխադրում :	Հունիս-հուլիս	Տնօրեն ՏՈՒԱԳՏ
2022-2023 ուստարում կատարած աշխատանքների արդյունավետության վերլուծություն , սովորողներին համապատասխանաբար կրթության հաջորդ աստիճանի փոխադրում :	Հուլիսի 2-րդ շաբաթ	Տնօրեն ՏՈՒԱԳՏ
Վերաքննությունների կազմակերպում , անցկացում :	Հուլիս	Տնօրեն ՏՈՒԱԳՏ

<p>Էլմատյանում քննական միավորների վերջնական անցկացում: Թեմատիկ գրավոր , գործնական, ամփոփիչ աշխատանքների տեսքերի ստուգում , արխիվացում :</p>	<p>Հուլիսի 8-10</p>	<p>ՏՈՒԱԳՏ</p>
---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------	---------------

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝